ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 10 » դեկտեմբեր 2024թ. No 7134 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 30-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N EL/01/3373-24 առ 02.12.2024թ. փորձագիտական եզրակացությունը,

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Ընդհանուր հիմունքներով գրանցման ընթացակարգով գրանցել թվով 4 դեղը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Բաղրյանին՝

1)Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության

կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5.Դեղի գրանցման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2024 թվականի դեկտեմբերի «10 » - ի N7134 - Ա հրամանի

# ԳՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ԴԵՂԵՐ

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Տեմպալգին | մետամիզոլ (մետամիզոլ նատրիում), տրիացետոնամին 4-տոլուենսուլֆոնատ | դեղահատեր թաղանթապատ | 500մգ+20մգ; (20/2x10/) բլիստերում | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | Սոֆարմա ԲԸ, Իլիենսկո շոսե փ. 16, 1220 Սոֆիա | Բուլղարիա | ԱԴ | 22505 29.11.2024 |
| 2 | Սիմուլեկտ | բազիլիքսիմաբ | դեղափոշի լիոֆիլացված ներարկման կամ կաթիլաներարկման լուծույթի | 20մգ; ապակե սրվակ և լուծիչ ամպուլում 5մլ | Նովարտիս Ֆարմասյուտիկա Ս.Ա., Գրան Վիա դե լես Կորտս Կատալանես 764, 08013 Բարսելոնա-բաց թողնման հսկող, Պաթեոն Իտալիա Ս.պ.Ա., Վիալե Գիան Բատիստա Ստուչի 110, 20900 Մոնզա, Իտալիա- դեղափոշու բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող, Դելֆարմ Դիժոն, 6 Բուլվար դե լ՝ Յուրոպ, Քետինյի, 21800, Ֆրանսիա-լուծիչի բալք արտադրող, առաջնային փաթեթավորող, որակի հսկող, Դելֆարմ Դիժոն, 6 Բուլվար դե լ՝ Յուրոպ, Քետինյի, 21800, Ֆրանսիա-երկրորդային փաթեթավորող | Իսպանիա | Նովարտիս Ֆարմա ԱԳ, Լիխտշտրասե 35, 4056 Բազել | Շվեյցարիա | Դ | 22506 29.11.2024 |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 3 | Հերտիկադ | տրաստուզումաբ | դեղափոշի լիոֆիլացված կաթիլաներարկման լուծույթի խտանյութի | 150մգ; ապակե սրվակ | ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, գ.Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, գ. Ստրելնա, փ. Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | Դ | 22507<br>29.11.2024 |
| 4 | Հերտիկադ | տրաստուզումաբ | դեղափոշի լիոֆիլիզացված կաթիլաներարկման լուծույթի խտանյութի | 440մգ; ապակե սրվակ և ապակե սրվակ 20մլ լուծչով | ԲԻՈԿԱԴ ԲԸ, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, գ.Ստրելնա, փ. Սվյազի, տ. 38, մասնաշենք 1, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | ԲԻՈԿԱԴ ԲԸ, տ. 38, մասնաշենք 1, տար.89, ներքաղ.տարածք գյուղ Ստրելնա, գ. Ստրելնա, փ. Սվյազի, Սանկտ Պետերբուրգ, 198515 | Ռուսաստան | Դ | 22508<br>29.11.2024 |